# «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈԴՎԱԾ 1.** «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ` Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասից հանել « Հանրապետության Նախագահին և »  բառերը:

**ՀՈԴՎԱԾ 2**. Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 3.** Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը` Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ`» բառերը փոխարինել  «Հայաստանի Հանրապետության վարչապետը`» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 4.** Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, 30-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, 32-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետը» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 5.**   Օրենքի 28-րդ հոդվածում՝

1. 5-րդ մասում՝ «քննչական կոմիտեի նախագահի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի» բառերով:
2. 7-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը

փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի:»:

**ՀՈԴՎԱԾ 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: